

16.02.2012թ.

գ. Մաքենիս

Տեղի ունեցավ Գեղարքունիքի մարզի Մաքենիս համայնքի ընդհանուր ժողով:

Ժողովին մասնակցում էին համայնքի բնակիչներ, ավագանու անդամներ և մարզպետարանի աշխատակից:

Ժողովի նախագահ Հ.Մանուկյան /համայնքի ղեկավար/

Ժողովի քարտուղար Կ.Կարապետյան /աշխատակազմի քարտուղար/

Օրակարգ

1. Մաքենիս համայնքի ղեկավար Հ.Մանուկյան 2011թվականի կատարած աշխատանքների մասին:

Զեկուցողն մանրամասն ներկայացրեց Մաքենիս համայնքում 2011թվականի ընթացքում կատարած աշխատանքների մասին հաշվետվությունը:

Հաշվետվությունում վեր հանվեց համայնքի սոցիալ-տնտեսական խնդիրների լուծման ուղղությամբ համայնքի ղեկավարի և գյուղապետարանի աշխատակազմի կողմից ձեռնարկված միջոցառումները: Ինչպես համայնքի բյուջեի կատարման, այնպես էլ համայնքում առկա խնդիրների լուծման ուղղությամբ /համայնքի ղեկավարի հաշվետվությունը կցվում է/:

Հաշվետվության շուրջ ծավալված մտքերի փոխանակությանը մասնակցեցին համայնքի ավագանին և բնակիչները:

Համայնքի բնակչության կողմից առաջարկվեց համայնքի ղեկավար Հ.Մանուկյան կողմից կատարված աշխատանքները գնահատել բավարար:

Համայնքի ընդհանուր ժողովը

ՈՐՈՇԵՑ՝

1. Համայնքի ղեկավար Հ.Մանուկյան 2011թվականի կատարած աշխատանքների հաշվետվությունը գնահատել բավարար:

2. Պահանջել համայնքի ղեկավար Հ.Մանուկյան և գյուղապետարանի աշխատակազմից 2012թվականի ընթացքում իրենց գործունեությունը նպատակաուղղել համայնքում առկա խնդիրների լուծմանը, համայնքի բյուջեի սեփական եկամուտների հավաքագրման կատարմանը և այդ մասին պարբերաբար իրազեկ պահել համայնքի ավագանուն և նակչությանը:

Ժողովի նախագահ՝

Հ.Մանուկյան

Քարտուղար՝

Կ.Կարապետյան

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Մաքենիս համայնքի ղեկավար Հ.Մանուկյան 2011թվականի կատարած աշխատանքների մասին:

Հարգելի համագյուղացիներ, հյուրեր և ավագանու անդամներ, Ձեզ եմ ներկայացնում հաշվետվություն՝ 2011թվականին և իմ կողմից Մաքենիս համայնքում կատարած աշխատանքների և բյուջեի կատարման մասին:

Մաքենիս համայնքում կա 155 տնտեսություն և ապրում է 500բնակիչ:

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» և Հայաստանի Հանրապետության «Համայնքային ծառայության մասին» օրենքով, համայնքի ՏԻՄ-երը իրենց գործունեությունը հիմնականում նպատակաուղղվել են համայնքի բնակչության հոգսերի և խնդիրների լուծմանը, համայնքում առկա սոցիալ-տնտեսական հիմանխնդիրների բարելավման հարցին: Այդ ընթացքում համայնքում իրականացվել է մի շարք ծրագրեր:

2011թ. գյուղապետարանի միջոցներով հարթեցվել և բարեկարգվել է գյուղամիջյան ճանապարհները, համայնքի ազգաբնակչության միջոցով մաքրվել է ոռոգման ցանցի ջրատարը, կատարվել է խմելու ջրագծի շուրջ 200զձմ. վերանորոգման և մաքրման աշխատանքները:

Միաժամանակ տեղեկացվում է, որ չնայած կատարված աշխատանքներ՝ համայնքում դեռևս առկա է մի շարք հիմնախնդիրներ, կապված ոռոգման ցանցի, խմելու ջրի, համայնքային կենտրոնի և գազաֆիկացման, որի հնարավորությունը գյուղապետարանը չունի, խնդիրների լուծումը ընդգրկված է համայնքի սոցիալ-տնտեսական զարգացման քառամյա ծրագրում և ներկայացվել է վերադաս մարմիններին:

2011թվականի ընթացքում համայնքի բնակիչների կողմից ստացվել է տարբեր բնույթի 11դիմում, որոնց տրվել է համապատասխան ընթացք և լուծում:

2011թվականի ընթացքում կայացել է ավագանու 8 նիստ:

Համայնքի բնակչությունը հիմնականում զբաղված է գյուղատնտեսությամբ և անասնապահությամբ:

Մաքենիս գյուղապետարանի աշխատակազմը բաղկացած է 3 հոգուց, իսկ համայնքի ավագանին բաղկացած է 5 անդամից:

Համայնքի վարչական տարածքը 960հա է, որից վարելահող՝ 580հա, տնամերձ՝ 80հա և 300հա այլ տեսքի հողեր:

2011թվականի համայնքի բյուջեի սեփական եկամուտները կազմում է9973.0հազ. դրամ, որի հավաքագրումը գյուղապետարանի կողմից կատարվել է 93.2%-ով:

Բյուջեն ըստ սեփական եկամուտների մասին հետևյալն է.

h/h	Եկամուտների անվանումը	Նախատեսված /հազ.դրամ/	Վաստացի /հազ.դրամ/	Կատարված %-ը
1	հողի հարկ	9973.1	9367.2	93.2
2	գույքահարկ	274.4	265.3	97
3	Հողի վարձավճար	1000	1181.3	118

Բյուջեի ծախսը աշխատավարձի և սոց հատկացման հողվածներով՝

ա/աշխատավարձ՝ 2639.1 հազ. դրամ

բ/սոց. հատկացում 626.0հազ.դրամ

ՄԱՔԵՆԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

Հ.ՄԱՆՈՒԿՅԱՆ